



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 14/19**

03.07.2019թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**)՝ քննարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց.... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցության և 371-րդ հոդվածի 5-րդ մասի «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները....» դրույթի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Սևակ Հաճի Հակոբյանը (ներկայացուցիչ՝ Արամ Խաչատրյան, այսուհետ՝ Դիմող), 14. 05. 2019թ. դիմելով ՀՀ սահմանադրական դատարան, խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար՝ 368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց.... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցության և 371-րդ հոդվածի 5-րդ մասի «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները....» դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթներում առկա ձևակերպման և իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության արդյունքում խախտվում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով նախատեսված անձի արդարադատության մատչելիության իրավունքը:

Դիմողը մեջբերելով ՀՀ քաղաքացիական դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը նշում է «Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «բողոքը կրկին ներկայացնել» արտահայտությունը հարկ է ընկալել տառացի նշանակությամբ՝ այս հնարավորությունից օգտվելու ցանկության դեպքում բողոք բերած անձը կրկին պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող և դրանում նշված փաստաթղթերով ուղեկցվող վերաքննիչ բողոքը»:

Ըստ Դիմողի՝ ինչ տրամաբանությամբ բողոք ներկայացնող կողմը պետք է եզրակացներ, որ օրենքը պահանջում է երկրորդ անգամ բողոքի ներկայացման դեպքում երկրորդ անգամ բողոքը կողմերին ուղարկել և նոր փոստային անդորրագրերը կցել բողոքին: Այսինքն՝ ստացվում է, որ քննարկվող իրավիճակում վերաքննիչ բողոք ներկայացնող կողմի համար առաջացել է արդարադատության մատչելիության սահմանափակում՝ խախտելով Սահմանադրության 63-րդ հոդվածով

նախատեսված արդար դատաքննության իրավունքը, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ոչ 368-րդ հոդվածի 5-րդ մասը, ոչ 371-րդ հոդվածի 5-րդ մասը (ոչ անգամ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «հուշումը») չի նախատեսում որևէ ձևակերպում, որը հնարավորություն կտար եզրակացնել, որ վերաքննչ դատարանի բողոքը կրկին ներկայացնելու դեպքում պետք էր երկրորդ անգամ բողոքը ուղարկել կողմերին և կցել երկրորդ անգամ ուղարկելու վերաբերյալ փոստային անդորրագրերը:

Այլ խոսքերով՝ ըստ Դիմողի, ստացվում է, որ վերաքննիչ բողոքը չի քննվել դատարանի կողմից, քանի որ բողոքը ներկայացնող կողմը նույն վերաքննիչ բողոքը (որին միայն պետական տուրքի լրացուցիչ անդորրագիր է կցվել) կրկին անգամ չի ուղարկվել կողմին, ընդ որում, այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը նման պահանջ տառացի չի նախատեսում: Այս պարագայում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 368-րդ հոդվածի 5-րդ մասին տալիս է յուրովի մեկնաբանություն և կիրառում է այն այնպիսի եղանակով, որն առաջացնում է Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքի (արդարադատության մատչելիության) խախտում:

Դիմողը գտել է, որ վերոնշյալ իրավիճակը (այսինքն՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի մեկնաբանությամբ 368-րդ հոդվածի 5-րդ մասի կիրառումը և 371-րդ հոդվածի 5-րդ մասի կանոնի առկայությունը) ոչ այլ ինչ է, քան հակասություն Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքի (արդարադատության մատչելիության) հետ:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի և 371-րդ հոդվածի 5-րդ մասի և իրավակիրառ պրակտիկայում դրանց մեկնաբանության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

Այսպես, ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 14-րդ, 18-րդ, 19-րդ, 42-րդ, 43-րդ և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին**՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը³:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «**Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների**, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»⁴:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»⁵:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

³ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

⁴ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

⁵ Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyime "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամարելելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին աստիճանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք փախու կամ չփախու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական աստիճաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս աստիճաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը⁶:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՌ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

⁶ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՌ-719, 6-րդ կետ:

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող իրավակարգավորումներն ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 368. Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը

5. Բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքը գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան ուղարկելու մասին ապացույցները: . . .

Հոդված 371. Վերաքննիչ բողոքը վերադարձնելը

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված

բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Սույն սահմանադրական գործով քննարկման առարկա պետք է **դարձնել «կրկին վերաքննիչ բողոք ներկայացնել»** եզրույթի դատավարական նշանակությունը՝ անձի արդար դատաքննության իրավունքի համատեքստում:

Հարկ է նախ նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը չի սահմանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված «կրկին վերաքննիչ բողոք ներկայացնել» ձևակերպման բովանդակությունը: Մասնավորապես, օրենսգրքով հստակ կարգավորված չէ այն, թե վերադարձված վերաքննիչ բողոքը դատարան կրկին ներկայացնելիս արդյո՞ք բողոքաբերը բողոքին պետք է կցի վերաքննիչ բողոքը (և դրանց կից փաստաթղթերի պատճենները) գործին մասնակցող անձանց և դատական ակտը կայացրած դատարան **կրկին** ուղարկելը հավաստող ապացույցներ, թե՞ առաջին անգամ (թերություններով) վերաքննիչ բողոքը (և դրանց կից փաստաթղթերի պատճենները) գործին մասնակցող անձանց ուղարկված լինելը հավաստող ապացույցներ ներկայացնելը բավարար է:

Ըստ իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասին տրված մեկնաբանության՝ «բողոքը կրկին ներկայացնել» արտահայտությունը հարկ է ընկալել տառացի նշանակությամբ՝ այս հնարավորությունից օգտվելու ցանկության դեպքում բողոք բերած անձը կրկին պետք է ներկայացնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող և դրանում նշված փաստաթղթերով ուղեկցվող վերաքննիչ բողոքը»:

Մինչև իրավակիրառ պրակտիկայում քննարկվող դրույթին տրված մեկնաբանությանն անդրադառնալով՝ պետք է նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածն ինքնին հաասության մեջ է գտնվում 367-րդ հոդվածի իրավակարգավորման հետ:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածը (վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը) սահմանում է

1. *Վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերն ուղարկվում կամ հանձնվում են վերաքննիչ դատարան: Բողոք ներկայացնողը վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճեններն ուղարկում է գործին մասնակցող անձանց, իսկ բողոքի պատճենը՝ դատական ակտը կայացրած դատարան:*

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածը, ի տարբերություն օրենսգրքի 368-րդ հոդվածի՝ պահանջում է, որպեսզի բողոքաբերը վերաքննիչ բողոքը **գործին մասնակցող անձանց ուղարկի դրանց կից փաստաթղթերի պատճենների հետ միասին:**

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածը չի պահանջում վերաքննիչ բողոքին կցել դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները: Միայն վերաքննիչ բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելը, առանց դրան կից ներկայացված

փաստաթղթերի պատճենների, փաստորեն, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի, բավարար է վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը այդ մասով պահպանված համարելու համար:

Նման իրավակարգավորման պայմաններում անձի համար անկանխատեսելի և անորոշ է դառնում վերաքննիչ բողոք ներկայացնելու կարգը, ինչն իր հերթին վտանգում է անձի արդար դատաքննության և արդաադատության մատչելիության իրավունքն այնքանով, որքանով անձի համար որոշակի չէ, թե ինչ կարգով է անհրաժեշտ ի վերջո վերաքննիչ բողոք ներկայացնել: Մասնավորապես, անձի համար հասկանալի չէ, թե ինչ վարքագիծ պետք է դրսևորի վերաքննիչ բողոք ներկայացնելիս, և ինչ հետևանք կարող է առաջանալ իր ընտրած այս կամ այն վարքագծի դրսևորման արդյունքում: Մասնավորապես, հասկանալի չէ, թե ի վերջո վերաքննիչ բողոք ներկայացնելիս դրան կից փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացվեն գործին մասնակցող անձանց, թե ոչ: Ուստի, քննարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են նաև բազմիցս քննարկված իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանելու տեսանկյունից:

Նույն խնդիրը, բնականաբար, առաջանում է նաև այն ժամանակ, երբ անձը պատրաստվում է վերաքննիչ դատարան ներկայացնել վերադարձված վերաքննիչ բողոքը՝ թերությունները վերացված վիճակում: Այս դեպքում, հարց է ծագում, թե արդյո՞ք վերաքննիչ բողոքին պետք է նորից կցվեն գործին մասնակցող անձանց ուղարկված լինելը հավաստող ապացույցներ, թե՞ ոչ, և արդյո՞ք պետք է ներկայացվեն նաև ապացույցներ ոչ միայն վերաքննիչ բողոքը, այլ նաև դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկված լինելը հավաստող ապացույցներ, թե՞ ոչ: Այլ կերպ ասած՝ վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելիս թերություններով ներկայացված վերաքննիչ բողոքը դրան կից փաստաթղթերով գործին մասնակցող անձանց ուղարկված լինելը հավաստող ապացույցներ ներկայացնելը արդյո՞ք բավարար չէ բողոք բերելու կարգը պահպանված համարելու համար:

Թերևս նշված հարցադրումների պատասխանը պետք է փնտրել **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 367-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝**

2. Վերաքննիչ բողոք ներկայացրած անձը բողոքը և դրան կից փաստաթղթերը չի ուղարկում գործին մասնակցող անձանց, եթե բողոքը ներկայացվել է՝

1) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:

2) հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման դեմ:

3) դատական տուգանք կիրառելու մասին որոշման դեմ:

Նշված հոդվածում թվարկված բացառություններում վերադարձված և թերությունները վերացված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքը, փաստորեն, նախատեսված չէ: Նշանակում է՝ վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելիս պետք է պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով վերաքննիչ բողոքին ձևին, բովանդակությանը և ներկայացման կարգին ներկայացվող ընդհանուր պահանջներին՝ դրան կցելով վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցներ:

Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասին տրված վերոնշյալ

մեկնաբանությանը, Կենտրոնը գտնում է, որ նախ, այն չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 367-րդ և 368-րդ հոդվածների իրավակարգավորումներից:

«*Բողոքը կրկին ներկայացնել*» արտահայտությունը կարող է մեկնաբանվել ոչ միայն առ այն, որ դրան պետք է կցվեն կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցները, այլև այն կարելի է մեկնաբանել նաև առ այն, որ վերաքննիչ բողոքին պետք է կցված լինեն վերաքննիչ բողոքը և դրանց կից փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույց՝ անկախ նրանից, այդ ապացույցները հավաստում են վերաքննիչ բողոքին կից ներկայացված փաստաթղթերի պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը նախկինում թերություններով ներկայացված վերաքննիչ բողոքի հետ միասին, թե այդ պատճենները գործին մասնակցող անձանց ուղարկելը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի հետ միասին:

Ի վերջո, անհրաժեշտ է հարցը քննարկել ոչ թե ձևական, այլ բովանդակային իմաստով: Վերաքննիչ բողոք բերելիս վերաքննիչ բողոքը գործին մասնակցող անձանց ուղարկելը հավաստող ապացույցներ ներկայացնելու դատավարական պահանջի սահմանման նպատակը գործին մասնակցող անձանց արդար դատաքննության իրավունքի և արդարադատության արդյունավետության ապահովումն է: Նման պահանջի սահմանմամբ օրենսդիրը փորձել է հավասարակշռել վերաքննիչ բողոք ներկայացնող անձի և գործին մասնակցող մյուս անձանց դատավարական կարգավիճակը առ այն, որպեսզի գործին մասնակցող մյուս անձինք տեղեկացված լինեն վերաքննիչ բողոք ներկայացված լինելու մասին և միաժամանակ ստանան այն փաստաթղթերի պատճենները, որոնք կից ներկայացվել են վերաքննիչ բողոքին՝ վերաքննչ դատարանում գործի քննությանը նախապատրաստվելու համար:

Եթե խոսքը թերություններով վերադարձված վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում այն նաև գործին մասնակցող անձանց կրկին ներկայացնելու մասին է, ապա այսպիսի պահանջը, որպես կանոն, ընդունելի է՝ ապահովելու համար գործին մասնակցող անձանց իրազեկված լինելը կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի և դրա բովանդակության մասին: Իսկ եթե այդ պահանջը վերաբերում է նաև կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին կից փաստաթղթերի պատճենները ևս գործին մասնակցող անձանց ներկայացնելուն, ապա այդ պահանջն ընդունելի կարող է համարվել միայն կրկին ներկայացված վերաքննիչ բողոքին սկզբնականից (թերություններով ներկայացվածից) տարբերվող այլ փաստաթղթեր կցելու դեպքում, որպեսզի գործին մասնակցող անձինք վերաքննիչ բողոքի հետ միասին ստանան դրան ուղեկցող փաստաթղթերի պատճենները: Բայց եթե վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելիս դրան կցվող փաստաթղթերը նույնն են, ինչ թերություններով ներկայացված վերաքննիչ բողոքը, այդ դեպքում այդ նույն փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու պահանջն ուղղակի անիմաստ է, քանի որ դրանք արդեն իսկ ուղարկված են գործին մասնակցող անձանց առաջին անգամ ներկայացված վերաքննիչ բողոքին կից, և դրանք կրկին նույն անձանց ներկայացնելն անիմաստ և աննպատակահարմար: Հետևաբար, վերաքննիչ բողոք բերող անձի կողմից արդեն իսկ գործին մասնակցող անձանց վերաքննիչ բողոքին ուղեկցող փաստաթղթերի պատճեններն ուղարկելը հավաստող ապացույցներ կրկին չներկայացնելը վերաքննիչ դատարան չլինելը չի կարող վերաքննիչ բողոքը կրկին

վերադարձնելու հիմք հանդիսանալ, քանի որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում (ՀՀ քաղ. դատ. օր. 368-րդ հոդվածի 5-րդ մասի վերջին նախադասություն), իսկ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը ներկայացրել է նոր վերաքննիչ բողոք, որում չի վերացրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները (ՀՀ քաղ. դատ. օր. 372-րդ հոդվածի 1-ին մաս):

Նման մոտեցումը հանգեցնում է անձի արդարադատության մատչելիության իրավունքի սահմանափակմանը, քանի որ այդ դեպքում անձը զրկվում է իր գործի վերանայման իրավունքից՝ ձևական նկատառումներից ելնելով: Այլ կերպ ասած՝ քաղաքացիադատավարական վերոնշյալ իրավակարգավորումներն արգելափակում են անձի դատական պաշտպանության իրավունքի բաղադրատարր հանդիսացող դատական ակտի բողոքարկման սահմանադրական իրավունքի իրականացումը:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասին և 371-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումները չեն նախատեսում հստակ և արդյունավետ ընթացակարգեր անձի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի ապահովման համար: Ուստի, դրանց բովանդակությունն ինքնին, ինչպես նաև դատական պրակտիկայում այդ դրույքների տրված մեկնաբանության սահմանադրականությունը կասկած է հարուցում:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «բողոքը գործին մասնակցող անձանց.... ուղարկելու մասին ապացույցները» բառակապակցության և 371-րդ հոդվածի 5-րդ մասի «Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները....» դրույթի և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան